ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.06.2011թ. **ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Ա.Ղուլարյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները,օգնականները,խորհրդականները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, ինչպես նաև համայնքապետարանների քարտուղարները:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

/Զեկ.՝ Ա.Աչինյան – ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Տավուշի մարզային գործակալության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ "Մարդահամարի մասին" ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկացվելու է 2011 թվականի հոկտեմբերի 12-ից 21-ը ներառյալ: Նույն որոշմամբ սահմանվել էր նաև փորձնական մարդահամար անցկացնել 2010 թվականի հոկտեմբերի 21-ից 30-ը ներառյալ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և Տավուշի մարզի 4 գյուղական համայնքներում, որն, ինչպես գիտեք, հաջողությամբ իրականացվել է:

ՀՀ Կառավարության նույն որոշման պահանջով ձևավորվել է մարդահամարի նախապատրաստման ու անցկացման մարզային հանձնաժողով՝ ՀՀ Տավուշի մարզպետի նախագահությամբ:

Մարդահամարը հանդիսանում է վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համատարած հաշվառման գործիք: Նրա հիմնական խնդիրն է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մշակման, ժողովրդագրական և սոցիալական հետազոտությունների, աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխման և օգտագործման ուսումնասիրման, բնակչության թվաքանակի և կազմի, ընթացիկ հաշվառման ու կանխատեսումների նպատակով բնակչության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ստացումը:

Զեկուցողը ներկայացրեց ՀՀ 2011 թվականին մարդահամարի նախապատրաստման ու անցկացման աշխատանքների ընթացիկ փուլերը.

1. Մինչև 2011թ. ապրիլի 1-ը բազմաբնակարան ֆոնդի սեփականատերերին տրամադրել Ձև թիվ 1 բնակբնութագիր պետական վիճակագրական ձևը և լրացման հրահանգը /տրամադրված է/:

2. Մինչև 2011թ. մայիսի 1-ը ապահովել մարզի քաղաքային բնակավայրերին և խոշոր գյուղական համայնքներին /5000 և ավելի բնակիչ ունեցող/ սխեմատիկ հատակագծերով: Պատրաստ են մարզի 4 քաղաքների հատակագծերը, Իջևան քաղաքի հատակագծում վերջին ուղղումներն են կատարվում:

3. 2011թ. հունիսին իրականացվելու է քաղաքային համայնքների ցուցակագրում – այդ աշխատանքների համար ներգրավվելու են վճարովի ցուցակագրողներ, իրականացվելու է հրահանգավորում – սահմանված ժամկետում կատարտվի: Այստեղ ակնկալվում է քաղաքապետարանների գործուն օժանդակությունն ու աջակցությունը:

4. 2011թ. հունիսին գյուղական համայնքներում նույնպես իրականացվելու է գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի Ձև թիվ 2 գյուղական աղյուսակ 1 և տնային տնտեսությունների Ձև թիվ 2 գյուղական աղյուսակ 2 ցուցակների կազմման աշխատանքները:

Այս աշխատանքներն իրականացնում է գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

Հոկտեմբերի 12-ից 21-ը ներառյալ մարդահամարի անցկացումն է կրիտիկական պահի դրությամբ, որը սահմանվել է հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը՝ 00 ժամը:

Հոկտեմբերի 22-ից 26-ն իրականացվում է ընտրանքային վերահսկիչ շրջագայություն:

2011թ. նոյեմբերի 1-ից 30-ն իրականացվում է մարդահամարի նյութերի հանձնում-ընդունում՝ ըստ վերադասության:

2011թ. դեկտեմբերի 1-ից 6 ամսվա կտրվածքով իրականացվում է մարդահամարի նյութերի նախապատրաստում /ծածկագրում/ և մեքենայական մշակում՝ կենտրոնացված կարգով, մարդահամարի վարչությունում:

<u>Առաջարկվեց.</u>

1. Համայնքների ղեկավարներին.

1.1 Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ 2011թ. Հայաստանի Հանրապետությունում մարդահամարը "Մարդահամարի մասին" ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու ուղղությամբ:

1.2 Քաղաքային և 5000-ից ավել բնակիչ ունեցող համայնքներում 2011թ. հունիսին իրականացվող ցուցակագրման աշխատանքներին ցուցաբերել գործուն աջակցություն;

1.3 Գյուղական համայնքներում 2011թ. հունիսին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակավայրերի Ձև 2 գյուղական աղյուսակ 1 և տնային տնտեսությունների Ձև 2 գյուղական աղյուսակ 2 ցուցակների կազմման աշխատանքները իրականացնել սահմանված կարգին համապատասխան:

2. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Տավուշի մարզային գործակալության պետին /Ա.Աչինյան/.

Մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովին:

3. Մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային հանձնաժողովի քարտուղարին /Հ.Ավալյան/.

Մարդահամարի նախապատրաստման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների մասին զեկուցել հանձնաժողովին և ձեռնարկել գործուն միջոցներ՝ դրանց վերացման ուղղությամբ:

2. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԻՆԳ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Զեկուցողը նշեց, որ մարզի 62 համայնքների 2011 թ. տեղական բյուջեների տարեկան եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 2 102.1 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները նախատեսվել են 569.2 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 27.1 %-ը, իսկ ՀՀ պետական բյուջեից պաշտոնական դրամաշնորհներ նախատեսվել է հատկացնել 1532.9 մլն. դրամ, որից դոտացիան կազմում է 1478.0 մլն. դրամ:

2011 թվականի հունիսի 1-ի դրությամբ եկամուտների փաստացի մուտքը կազմել է 785.3 մլն. դրամ, որը հինգ ամսվա նախատեսված եկամուտների 90.6 %-ն է: Սեփական եկամուտների փաստացի մուտքը կազմել է 159.0 մլն. դրամ, կամ կատարվել է նախատեսվածի 69.6 %-ը:

Հինգ ամսվա կտրվածքով նախատեսված դոտացիան (615.9 մլն. դրամ) հատկացվել է ամբողջությամբ:

Սեփական եկամուտների թերհավաքագրված գումարը կազմում է 69.5 մլն. դրամ, այդ թվում հողի հարկի գծով թերհավաքագրումը կազմել է 27.8 մլն. դրամ, գույքահարկի գծով՝ 14.7 մլն. դրամ, այլ եկամուտների մասով՝ 10.5 մլն. դրամ, գույքի վարձակալությունից եկամուտների մասով՝ 3.1 մլն. դրամ, տեղական տուրքերի մասով՝ 6.5 մլն. դրամ և պետական տուրքերի մասով՝ 1.8 մլն. դրամ:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 15.03.2011թ. թիվ 01/16/1419-11 հանձնարարականի կատարման նպատակով ՀՀ Տավուշի մարզպետի 16.03.2011 թ. թիվ 01/09/941-11 գրությամբ մարզի համայնքներին է տրամադրվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների 2012 թվականի գումարների հաշվարկներում օգտագործվող հողի հարկի և գույքահարկի գծով 2010 թվականի հաշվարկային ցուցանիշների տրամադրման վերաբերյալ հավելվածները, որոնց ներկայացման համար ժամկետ էր սահմանվել մինչև սույն թվականի մայիսի 25-ը: Առ այսօր պահանջվող տեղեկատվությունները չեն ներկայացրել թվով 12 համայնքներ (Աճարկուտ, Ենոքավան, Կիրանց, Աղավնավանք, Այգեձոր, Իծաքար, Նավուր, Չինարի, Վ.Ծաղկավան, Բաղանիս, Զորական, Հաղթանակ):

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 12.03.2011 թ. թիվ 01/16/1376-11 հանձնարարականի, սույն թվականի մարտի 1-ի դրությամբ «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» և «ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների մասին» ներկայացված հաշվետվություններում, ապառքների վերաբերյալ ցուցանիշներում առկա են տարբերություններ: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների կողմից պատշաճ մակարդակով չեն տարվում հողի հարկի և գույքահարկի բազային տվյալների հաշվառումը, որի հետևանքով էլ ապառքների, տույժերի և տուգանքների վերաբերյալ հաշվետվությունները հավաստի չեն:

Զեկուցողը նաև նշեց, որ շատ համայնքների կողմից բազային տվյալները չեն ճշգրտվել կամ ճշգրտման աշխատանքները շատ դանդաղ են ընթանում, որն էլ պատճառ է հանդիսանում որ համայնքներում փաստացի առկա ապառքները չեն համապատասխանում բազային տվյալների ապառքների հանրագումարին: Բերդի և Դիլիջանի համայնքների միությունների կողմից ներկայացված հողի հարկի արխիվացված տվյալները 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ են, որը նշանակում է, որ 2005 թվականից մինչև 2011 թվականը բազային տվյալները ծրագրին համապատասխան չեն վարվել:

Ավարտելով իր ելույթը, զեկուցողը նշեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերելու մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Առաջարկվեց.

1. Մարզի համայնքների ղեկավարներին.

1.1 Ձեռնարկել միջոցառումներ 2011 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտները եռամսյակային համամասնություններով սահմանված չափաքանակներին համապատասխան հավաքագրելու ուղղությամբ:

1.2 Հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին մարզպետարան ներկայացվող հաշվետվությունները սահմանված ժամկետներում ներկայացնելու համար:

1.3 Հնարավորության սահմաններում ապահովել համայնքների աշխատակազմերում ինտերնետային կապի առկայությունը:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ